ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

5 փետրվարի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

7
(3216)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

# ՔՊ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔ ՉԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը տեղեկացրեց, որ հանցագործության մասին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը չկատարելու հիմքով: Հաղորդումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: Խոսքը վերաբերում է ԱԺ պատգամավոր, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանին, որը, ըստ հաղորդման, դիտավորությամբ չի կատարել դատարանի վճիռը, չնայած պարտվել է դատական գործընթացում:

Հիշեցնենք, որ 2023 թվականի ապրիլի 4-ին՝ ԱԺ Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նիստի ընթացքում, Արթուր Հովհաննիսյանը իրեն պահեց պատգամավորին ոչ հարիր՝ սպառնալով կտրել ՄԻՊ ընդդիմադիր թեկնածու Էդգար Ղազարյանի լեզուն եւ ականջները: Այս հայտարարությունների համար Հովհաննիսյանը դատարանում պարտվել է, վճարել 1 միլիոն 250 հազար դրամ փոխհատուցում, սակայն հրաժարվում է ներողություն խնդրել, ինչն էլ հանդիսացել է դատական ակտի չկատարման հիմք: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքով հստակ սահմանված է՝դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը պարտադիր է կատարման համար, իսկ դրա չկատարումը քրեորեն պատժելի արարք է:

Այսպիսով, ըստ իրավական տրամաբանության՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը պարտավոր է արձագանքել հաղորդմանը եւ քրեական վարույթ նախաձեռնել՝ անկախ նրանից՝ անձը շարքային քաղաքացի է, թե իշխող ուժի պատգամավոր: Իսկ վարույթ նախաձեռնելու համար նա պետք է Ազգային Ժողովի պատգամավորների համաձայնությունը ստանա՝ քվեարկությամբ: Սակայն գլխավոր դատախազը չի մտնում խորհրդարան՝ ՔՊ խմբակցության քարտուղարի հետեւից, քանի որ նա իշխանական պատգամավոր է: Այնինչ այս տարիներին 7-ից ավելի ընդդիմադիր պատգամավորների անձեռնամխելիությունից զրկելու համար Աննա Վարդապետյանը Ազգային Ժողով գնացել է:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության գործունեությանը վերաբերող մի շարք հանգամանքներ, որոնք ունեն հանրային նշանակություն եւ հնարավոր քրեաիրավական բաղադրիչ: Ավելի վաղ «Ժողովուրդ»-ը հրապարակել էր տեղեկություններ այն մասին, որ 2025թ. հոկտեմբերի 9-ին վարչության պետ Ռաֆայել Զաքարյանի հանձնարարությամբ ՊԵԿ ներսում գործող «WhatsApp» ծառայողական խմբում տրվել է ցուցում՝ Մոսկվայից Երեւան ներմուծվող ոսկյա ձուլակտորների վրա առկա նույնականացնող (սերիական) թվերը չնկարելու վերաբերյալ: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ 2025թ. հոկտեմբերի 9-ից դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում Երեւանի ոսկերչական ֆաբրիկա ՍՊ ընկերության կողմից ներմուծված շուրջ 2 տոննա ոսկյա ձուլակտորների վրա առկա սերիական համարները, արտադրող երկրի տվյալներն ու քաշը լուսանկարահանման միջոցով չեն ֆիքսվել, ինչի փոխարեն նկարահանվել են ձուլակտորների այն հատվածները, որտեղ տվյալները տեսանելի չեն:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***




2026 թվականի հունվարի 29-ին քաղաքացի Հակոբ Խաչատրյանը դատարան է ներկայացրել հայց՝ ընդդեմ «Վիվա Արմենիա» ընկերության: Հայցը վերաբերում է հողամասը ազատելուն, կայանի ապամոնտաժմանը եւ չվճարված վարձավճարների բռնագանձմանը եւ հունվարի 30-ին հանձնվել է դատարանի դատավոր Էմին Աբգարյանի աշխատակազմին: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ ՀՀ դատական տեղեկատվական համակարգից: «Վիվա Արմենիա»-ի այս վարքագիծը տարիներ շարունակ ներկայանում է որպես պատասխանատու բիզնեսի օրինակ՝ իր հրապարակային հաղորդագրություններում շեշտադրելով պատասխանատվությունն ու հարգանքը որպես հիմնարար արժեքներ: Սակայն ներկայացված հայցի բովանդակությունը վկայում է բոլորովին այլ պատկերի մասին: Ըստ հայցի՝ ընկերությունը, լինելով եկամտաբեր եւ շուկայում առաջատար դիրք ունեցող կառույց, չի վճարել քաղաքացուն պատկանող տարածքի վարձավճարը եւ չի կատարել հողամասը ազատելու ու կայանը ապամոնտաժելու պահանջը:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***

Աբու Դաբիում աշխատանքային այցի շրջանակում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ մասնակցել է «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակաբաշխությանը: Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւին հանձնվել է «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակը: Երկու պետությունների ղեկավարները մրցանակին արժանացել են Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատման, տարածաշրջանում համագործակցության եւ կայունության ապահովման օրակարգը հետեւողականորեն առաջ մղելու համար: Մրցանակները հանձնել է Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահ Շեյխ Մուհամադ Բին Զայեդ Ալ Նահյանը:

⇨ ***էջ 2***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ԹՈՂ ԳՈՆԵ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԲԱՐՁՐԱՑՆԵՐ»

**Հունվարի 21-24-ին Դավոսում տեղի ունեցած համաշխարհային տնտեսական հանձնաժողովի ժամանակ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհակալություն հայտնեց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, ինչը մեծ ցասում առաջացրեց Հայաստանի շատ քաղաքացիների շրջանում: Փետրվարի 3-ին «Համահայկական ճակատ» շարժման եւ համանուն կուսակցության անդամները բողոքի ակցիա իրականացրեցին նախագահականի դիմաց՝ Վահագն Խաչատուրյանից պահանջելով ներողություն խնդրել հայ ժողովրդից եւ հատկապես զոհված զինծառայողների ընտանիքներից: Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցել է «Համահայկական ճակատ» կուսակցության խորհրդի անդամ Նաիրա Գեւորգյանի հետ:**

**-Տիկին Գեւորգյան, ինչպե՞ս եք գնահատում Դավոսում տեղի ունեցածը: Ինչի՞ համար շնորհակալություն հայտնել Ադրբեջանի նախագահին:**

-Դավոսում մեր հանրահայտ նախագահը շնորհակալություն է հայտնել Ալիեւին, ինչը մեզ համար անընդունելի է: Ինչի՞ համար շնորհակալություն հայտնել՝ մեր զոհերի՞, Եռաբլուրի՞, գերությունում գտնվող մեր հայրենակիցների՞, անհետ կորած զինծառայողների՞: Մենք պահանջում ենք, որ ՀՀ նախագահը ներողություն խնդրի հայ ժողովրդից եւ, հատկապես, այն ընտանիքներից, որոնք մարդկային կորուստներ են կրել պատերազմների ընթացքում:

**-Ակնկալո՞ւմ եք նախագահի հետ հանդիպում կամ գուցե նամա՞կ եք փոխանցելու:**

-Միանշանակ: Նա սրանով խախտել է նաեւ Սահմանադրությունը:Գուցե ծնողներ լինեն, որ ցանկանան հանդիպել Խաչատուրյանի հետ, ցանկանան զրույց ունենալ նրա հետ: Մենք նամակ ենք փոխանցելու: Իհարկե, հույս չունենք, որ մեր սպասելիքները կարդարանան, բայց, այնուամենայնիվ, կսպասենք պատասխանի: Որ շնորհակալություն էր հայտնում Ալիեւին, գոնե մեր գերիների մասին հարց բարձրացրե՞լ է: Թող գոնե գերիների հարցը բարձրացներ, ոչ թե շնորհակալություն հայտներ չգիտես, ինչի համար:

**-Գործող իշխանությունն ընդգծում է, որ նպատակը խաղաղության հասնելն է, որ իրենց օրակարգում միայն հարեւան պետությունների հետ խաղաղ ապրելն է: Արդյո՞ք խաղաղության հասնելու ճանապարհն այս է:**

-Իհարկե ոչ, սա իրենց համար է խաղաղություն, քանի որ իրենց «պապան» ինչ թելադրում է, իրենք այն էլ անում են: Սենց խաղաղություն չկա: Ի՞նչն է խաղաղ: Որտե՞ղ ենք մենք տեսնում մեր խաղաղությունը: Ադրբեջանցիները Երեւան քաղաքում ինչպես ուզում, իրենց պահում են: Ես չեմ սպասում, որ խաղաղություն է լինելու: Դա իրենց ու իրենց «պապաների» համար է խաղաղություն եւ ոչ հայ ժողովրդի:

*Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

Ամիսներ առաջ գրել էինք, որ Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի աշխատասենյակում մի քաղաքացի է ծեծի ենթարկվել, որը գնացել է իր կնոջն աշխատանքից ազատելու հարցի պարզաբանման հետքերով:

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ այս առիթով հարուցված քրեական վարույթը կարճվել է, քանի որ կողմերը եկել են հաշտության:

ArmLur.am-ը գրել էր, որ դեպքին նախորդել է կնոջ՝ աշխատանքից ապօրինի ազատումը: Վրդովված ամուսինը զանգահարել է Կադաստրի պետին, սակայն պատասխան չստանալով՝ ձայնային հաղորդագրություն է ուղարկել: Մի քանի ժամ անց, նրա ընտանիքի պնդմամբ, Արթուրին առեւանգել են եւ դաժանաբար ծեծի ենթարկել: Նշվում է, որ ծեծի տեսարանը շարունակվել է մի քանի ժամ եւ մասնակցել է շուրջ հիսուն մարդ:

Հիշեցնենք, որ ՆԳՆ-ից կատարվածի վերաբերյալ հայտնել են հետեւյալը. «Քաղաքացուց ծեծի ենթարկվելու վերաբերյալ ստացվել է հաղորդում, որն անմիջապես, պատշաճ կարգով, արձանագրվել է եւ ուղարկվել նախաքննական մարմին: Ոստիկանության կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝դեպքի բոլոր հանգամանքներն ու անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ»:

Ավելի ուշ հայտնել էինք, որ Կադաստրի պետի աշխատասենյակում ծեծի ենթարկվածի կնոջը՝ Վերոնիկային, ոստիկանությունը տարել է Քննչական կոմիտե:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Աբու Դաբիում աշխատանքային այցի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակի գլխավոր քարտուղար Մուհամմադ Աբդելսալամի հետ:

Մուհամմադ Աբդելսալամը շնորհակալություն է հայտնել վարչապետին հրավերն ընդունելու եւ «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակաբաշխությանը մասնակցելու համար՝ կարեւորելով նրա ներկայությունը միջոցառմանը:

Կողմերը վստահություն են հայտնել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի՝ մրցանակին արժանանալու փաստը նոր ազդակ կհաղորդի Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղության օրակարգին, ինչպես նաեւ կնպաստի տարածաշրջանում համագործակցության եւ կայունության ապահովման ուղղությամբ հետեւողական առաջընթացին:

Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության եւ բարձր գնահատանքի համար՝ ընդգծելով խաղաղության եւ փոխադարձ վստահության վրա հիմնված նախաձեռնությունների կարեւորությունը:

## ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանը հյուրընկալել է Շվեդիայի հարկային գործակալության ներկայացուցիչներին՝ քննարկելու հարկային վարչարարության բարելավման ոլորտում երկկողմ համագործակցության հնարավոր ուղղությունները:

ՊԵԿ-ի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ Էդուարդ Հակոբյանը բարձր է գնահատել Շվեդիայի հարկային գործակալության նախաձեռնությունը եւ պատրաստակամությունը՝ երկկողմ համագործակցությունը խորացնելու գործում:

Շվեդիայի հարկային գործակալության ներկայացուցիչները նշել են, որ փաստահավաք երկրորդ այցի շրջանակում նախատեսվող հանդիպումներից հետո կներկայացնեն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եւ Շվեդիայի հարկային գործակալության միջեւ երկկողմ համագործակցության ծրագրի նախագիծը՝ սահմանելով հետագա համագործակցության տեսլականը:

ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը վստահություն է հայտնել, որ հաստատված երկկողմ համագործակցությունը հիմք կհանդիսանա հետագա երկարաժամկետ ծրագրերի ձեւավորման համար՝ նպաստելով հարկային վարչարարության բարելավմանը, հարկային կարգապահության բարձրացմանը եւ արդար, արդյունավետ ու ժամանակակից հարկային համակարգի ձեւավորմանը:

## ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ՉԿԱՆ

Հայաստանում քաղբանտարկյալներ չկան, եւ այդ գնահատականը հնչեցվել է նաեւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի համապատասխան հանձնաժողովի զեկույցում: Այս մասին հայտարարեց արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը:

«Ես կրկին ասում եմ՝ մեր երկրում քաղբանտարկյալներ չկան: Վերջերս եվրոպական կառույցների կողմից հրապարակված զեկույցներում որեւէ հղում քաղբանտարկյալների մասին չկա, եւ սա ինքնին շատ խոսուն է»,-նշեց նախարարը:

Սրբուհի Գալյանի խոսքով՝ քաղաքական հայացքները կամ քաղաքական գործունեությունը չեն կարող անձին ազատել հնարավոր հանցանքի համար պատասխանատվությունից:

«Չի կարելի պատսպարվել քաղաքական հայացքի կամ կարգավիճակի հետեւում եւ կատարել հանցանք, իսկ հետո խոսել քաղաքական հետապնդման մասին: Քաղաքականությամբ զբաղվելը չի նշանակում, որ քո գործողություններին պարտադիր պետք է քաղաքական ենթատեքստ տրվի»,-ընդգծեց նա:

Նախարարը նշեց, որ առկա քրեական գործերով քննությունները շարունակվում են, իսկ վերջնական գնահատական կարող են տալ միայն դատարանները:

«Քանի դեռ դատական ակտ չկա, որեւէ անձնական կամ քաղաքական հետեւություն վճռորոշ նշանակություն չունի: Քննչական, դատախազական եւ դատական մարմինները կատարում են իրենց աշխատանքը, եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող պատասխանատու լինել այդ մարմինների գործունեության համար»,-ասաց Սրբուհի Գալյանը:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ԹԱԳՈՒՀԻՆ ԿԴԱՌՆԱ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆ

Նիդեռլանդների թագուհի Մաքսիման կծառայի որպես պահեստազորային երկրի զինված ուժերում: Այս մասին հաղորդում է RTL Nieuws հեռուստալիքը:

«Թագուհի Մաքսիման Պաշտպանության նախարարությանը կմիանա որպես կես դրույքով զինվոր. նա կդառնա պահեստազորային: Նա կմիանա բանակին եւ իր ուսումնական ծրագիրը կսկսի այս շաբաթվա վերջում», - նշում է լրատվամիջոցը:

Թագուհին կանցնի կարճատեւ ռազմական պատրաստության ծրագիր՝ տեսական եւ գործնական բնույթի:

Հեռարձակողը նաեւ նշում է, որ պահեստազորայինները կարող են կանչվել գործող զինծառայողների հետ միասին առաջադրանքներ կատարելու, այդ թվում՝ աղետների դեպքում օգնություն ցուցաբերելու, իսկ խոշոր հակամարտության դեպքում՝ «ժամանակավորապես փոխարինելու պրոֆեսիոնալ զինվորական անձնակազմին»:

Պաշտպանության նախարարությունը շեշտում է, որ թագուհու որոշումը հիմնականում «խորհրդանշական» է եւ ակնկալում է խթանել զորակոչվել ցանկացողների թիվը:

Նախարարությունը նաեւ նշել է, որ արքայադուստր Ամալյայի՝ Պաշտպանության քոլեջի ուսանողուհի դառնալուց հետո դիմումների թիվը աննախադեպ աճ է գրանցել:

RTL-ի տվյալներով՝ բանակին միանալու որոշումից կարճ ժամանակ առաջ թագուհին մասնակցել է իր դստերը՝ արքայադուստր Ամալյային կապրալի կոչում շնորհելու արարողությանը:

## ՆԱԽԱՐԱՐԸ ՄԵԿՆԵԼ Է ԴԱՄԱՍԿՈՍ

Ռուսաստանի պատվիրակությունը՝ պաշտպանության փոխնախարար, բանակի գեներալ Յունուս-Բեկ Եվկուրովի գլխավորությամբ, ժամանել է Դամասկոս: Այս մասին հաղորդում է սիրիական SANA գործակալությունը:

Պատվիրակությանն ընդունել է Սիրիայի բանակի գլխավոր շտաբի պետ Ալի ան-Նաասանը:

Սիրիայի պաշտպանության նախարարությունն իր Telegram ալիքում հայտնել է, որ ռուսական պատվիրակության այցը կտեւի մի քանի օր եւ նպատակ ունի զարգացնելու եւ ամրապնդելու ռազմական համագործակցությունն՝ ի բարօրություն երկու երկրների ընդհանուր շահերի:

Հունվարի 28-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Կրեմլում ընդունել էր



Սիրիայի անցումային շրջանի նախագահ Ահմեդ աշ-Շարաային: Կողմերը քննարկել էին երկկողմ համագործակցությունը, տնտեսությունը եւ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը:

ԶՐՊԱՐՏԱՆՔ ՉԿԱ

# ՀՖՖ-Ն ՊԱՐՏՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**«Փյունիկի» նախկին սեփականատեր Արթուր Սողոմոնյանը ակումբի կայքին տված հարցազրույցում կոշտ քննադատել էր ՀՖՖ-ին. ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանի թիմը դատարան էր գնացել՝ «Փյունիկի» նախկին սեփականատեր Արթուր Սողոմոնյանի դեմ՝ պնդելով, թե նրա հրապարակային քննադատությունն իբր զրպարտություն է ու վնասում է իրենց հեղինակությանը:**

ՀՖՖ նախագահ Մելիքբեկյանի օրոք՝

- «Մարզադաշտերի վարձերի աճ»
- «Մանկապատանեկան ծրագրերի անարդյունավետություն»
- «Ոչ «յուրային» ակումբների փակվել»
- «Կեղծված ընտրություններ»
- «Չարթերային չվերթներ՝ ոչ ֆուտբոլային մարդկանցով»
- Բանակում չծառայելու համար ԲԿՄԱ են մտնում արտոնյալ ծանոթների երեխաները:

Տարիներ տեւած դատական նիստերից հետո գործը հասել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան: Եւ նախորդ տարվա նոյեմբերի 20-ին դատարանը եզրակացրել է՝ Սողոմոնյանի հայտարարություններում զրպարտանք չկա: Նկատենք, որ դատարանը առանց քննության է թողել, ըստ էության, կոռուպցիոն բնույթի մեղադրանքները: Սա ՀՖՖ-ի արդեն երկրորդ խոշոր պարտությունն է՝ Տիգրան Հակոբյանի՝ Լոզանի գործից հետո:

Այսինքն՝ հայկական ֆուտբոլը ոչ միայն մրցաշարային պարտություններ է գրանցում, այլ նաեւ դատարաններում, սկզբունքային հարցերում:

Այս դատական պատմությունը նաեւ այն մասին է, որ ֆեդերացիան փաստացի չի կարողացել համոզիչ ցույց տալ՝ իր արած ծախսերն ինչքան նպատակային ու արդյունավետ են եղել: Իսկ քաղաքական իշխանությունները շարունակում են պահել Արմեն Մելիքբեկյանին ու թիմին՝ ամենատարբեր ձախողումներից հետո: Պարտված ՀՖՖ-ն, բնականաբար, պարտավոր է վճարել Սողոմոնյանին: Իսկ Սողոմոնյանը դեռ վաղուց ասել էր՝ այդ գումարներն ամբողջությամբ ուղղելու է բարեգործությանը:

Այսպիսով, ՀՖՖ այս ղեկավարության պայմաններում հայկական ֆուտբոլը շարունակում է ընկնել՝ բերելով նոր պարտություններ: Շռայլ ու անպատասխանատու ծախսերից բացի՝ Արմեն Մելիքբեկյանը պարտավոր է նաեւ արդյունք ցույց տալ, ինչը քաղաքական իշխանությունն անկարեւոր է համարում: Արդյունքում տուժում է մի ողջ ոլորտ, որտեղից նվիրյալներն ու պրոֆեսիոնալները հեռանում են:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՖՐԱՆՍԻԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲԱՆԱՁԵՎ

Ֆրանսիայի ազգային ժողովը միաձայն՝ 183 կողմ ձայնով, ընդունել է Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիներին ազատ արձակելու կոչով բանաձեւ:

Բանաձեւը ներկայացրել է համահեղինակ Լորան Վոկիեն՝ Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի անունից:

X-ի իր միկրոբլոգում նա այս առնչությամբ գրել է, որ որպես Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ՝ ուրախ է փետրվարի 3-ին իր առաջարկած բանաձեւի միաձայն ընդունման համար:

«Ֆրանսիան պարտավոր է գործել, երբ մյուսները լռում են: Մենք պաշտպանում ենք քրիստոնյա ժողովրդի գոյատեւման իրավունքը այն տարածաշրջանում, որտեղ նրանք փոքրամասնություն են»,-գրել է նա:

Ադրբեջանը շարունակում է ապօրինի պահել 19 հայ գերիների, որոնց թվում են Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական նախկին ղեկավարության ներկայացուցիչները՝ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը եւ Արայիկ Հարությունյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանը, Ազգային ժողովի նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, պաշտպանության նախկին նախարար Լեւոն Մնացականյանը, պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը:

Հունվարի 14-ին Ադրբեջանը Հայաստանին է վերադարձրել 4 գերիների՝ Դավիթ Դավթյանին, Գեւորգ Սուջյանին, Վիգեն Էուլջեքջյանին եւ Վագիֆ Խաչատրյանին: Ադրբեջանը մինչ այդ պաշտոնապես հաստատել էր իր մոտ 23 հայ գերու առկայությունը:

## ՊԱՐՏԱԴԻՐ ՀԴՄ ԿՏՐՈՆ

Վճարահաշվարկային տերմինալների միջոցով բժշկական ծառայությունների համար կատարված վճարումների դիմաց քաղաքացիներին պարտադիր կտրվի էլեկտրոնային ՀԴՄ կտրոն:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանի հեղինակած՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը հավանություն ստացավ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Պատգամավորը հիշեցրեց՝ բժշկական ծառայություններից օգտվելիս պարտադիր է վճարումներն անկանխիկ կատարելը:

«Այդ վճարումները հնարավոր է իրականացնել կամ POS տերմինալներով, կամ բժշկական հաստատություններում դրված տերմինալների միջոցով: Ըստ նախագծի՝ այսուհետ բոլոր բժշկական ծառայություններից օգտվելիս անձանց տրվելու է էլեկտրոնային ՀԴՄ կտրոն: POS տերմինալով վճարում կատարելիս այս օրենքն, այսպես թե այնպես, գործում էր, իսկ վճարային տերմինալների դեպքում նման հնարավորություն չկար: Հիմա այդ հնարավորությունն ենք ընձեռում»,-ասաց պատգամավորը:

Այդ ամբողջ տվյալները՝ ծառայությունները, որոնցից մարդիկ օգտվել են, հավաքվելու են Armed-ում: Ըստ պատգամավորի՝ հնարավոր կլինի դա վերլուծելով՝ նաեւ հետագայում վերհանել ապահովագրության հետ կապված խնդիրները, թե մարդիկ որ ծառայություններից են շատ օգտվել:

ՊԵԿ նախագահի տեղակալ Համլետ Սահակյանը հայտնեց նախագծի առնչությամբ կառավարության կողմ եզրակացությունն ու տեխնիկական առաջարկները:

## ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՆ

Կանադայի իշխանությունները շահագրգռված չեն միջուկային զենք ունենալու հարցում: Այս մասին հայտարարել է Կանադայի պաշտպանության նախարար Դեւիդ Մաքգինթին, գրում է The Globe and Mail-ը:

«Կանադան բացարձակապես ոչ մի մտադրություն չունի միջուկային զենքի տիրապետելու վերաբերյալ»,- ասել է նա եւ հավելել, որ Կանադայի կառավարությունը հավատարիմ է Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի կատարմանը, որին երկիրը միացել է 1960-ականների վերջին:

Նախարարը հիշեցրել է, որ կառավարությունը մտադիր է վերակառուցել երկրի զինված ուժերը եւ վերազինել դրանք:

2025 թվականին Կանադայի վարչապետ Մարկ Քարնին որոշում է կայացրել առաջիկա հինգ տարիների ընթացքում 84 միլիարդ դոլար ուղղել պաշտպանական կարիքներին. սա 1950-ականներից ի վեր նույն ժամանակահատվածի համար ռազմական ամենախոշոր ծախսն է: Միջոցները կուղղվեն աշխատավարձերի բարձրացմանը, ճշգրիտ հարվածներ հասցնելով միջոցների ձեռքբերմանը, հնացող ենթակառուցվածքների արդիականացմանը եւ կիբերանվտանգությանը:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

# Ո՞Վ ԷՐ ԶԱՆԳԵԼ ՍԱՐԳԻՍ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ

**ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հորեղբոր թոռան ֆրեական գործով ուշագրավ զարգացումներ են: Նախ, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ սպանված Սարգիս Զեյնալյանի ծնողներին հրավիրել են հարցաքննության: Սակայն ամենուշագրավն այն է, որ նախաքննական մարմինը գործընթաց չի սկսում այն անձի նկատմամբ, որը զանգահարել է Սարգիս Զեյնալյանին եւ կանչել կոնկրետ դեպքի վայր: Ըստ էության, եթե Սարգիս Զեյնալյանին զանգ չհնչեր, ապա Սարգիս Զեյնալյանը չէր գա նշված վայր, ու նրան չէին սպանի:**

Ի դեպ, այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Տեղեկություններ ու տեսանյութեր կան, որ մինչ Սարգիս Զեյնալյանին սպանելը, երկու եղբայր դեպքից առաջ եղել են նրա եղբոր աշխատանքի վայրի մուտքի մոտ, ու չի բացառվում, որ միգուցե ցանկացել են Սարգիս Զեյնալյանին սպանելուց առաջ եղբորը սպանել: Հուսանք, այս հարցերի պատասխանը հետագայում կտա նախաքննական մարմինը, որը դեռ քննությունը շարունակում է:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 10-ին Աբովյան քաղաքում 2 անձ հարձակվել էին ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հորեղբոր թոռան՝ 24-ամյա Սարգիս Զեյնալյանի վրա, դանակի հարվածներ հասցրել, ինչի հետեւանքով նա մահացել էր: Դանակահարությունը տեղի էր ունեցել Աբովյանի կենտրոնական հատվածում՝ Հանրապետության-Օգոստոսի 23 փողոցների խաչմերուկում՝ կանգառասրահի մոտ: Դեպքի առթիվ քննվող քրեական վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2 անձի նկատմամբ՝ եղբայրներ, Աբովյան քաղաքի բնակիչներ, 42-ամյա Աշոտ Սոխրաբյանցի եւ 34-ամյա Բենյամին Սոխրաբյանցի նկատմամբ սպանության հատկանիշներով: Նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան ու վերջիններս կալանավորված են:

Դատելով հարազատների հրապարակային գրառումից՝ ամիսներ առաջ 24-ամյա Սարգիսի ու ենթադրյալ մարդասպան Աշոտ Սոխրաբյանցի միջեւ Գինու փառատոնին վեճ է եղել, ու միջադեպը այնքան է խորացել, որ ավարտը եղել է ճակատագրական:

Ենթադրյալ մարդասպանը 14 տարի առաջ էլի մարդ էր սպանել ու ազատության մեջ նոր էր հայտնվել:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## 2,5 ԿԳ ՄԵԹԱՄՖԵՏԱՄԻՆ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն իրացրին հունվարի 31-ին: Ըստ տեղեկության՝31-ամյա երկու տղամարդիկ պարբերաբար ձեռք էին բերում եւ իրացնում խոշոր չափերի տարատեսակ թմրամիջոցներ:

Հունվարի 31-ին՝ժամը 20:45-ի սահմաններում, մայրաքաղաքի Սիլիկյան թաղամասում, թմրանյութ իրացնելու պահին, քրեական ոստիկանները ձերբակալեցին տղամարդկանց եւ նրանցից մեկի վարած «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխեցին Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին: Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք եւ կնիքվեց:

Խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվեց մոխրացած հետքերով կաթուցիչ, իսկ մյուսի մոտ ավելի քան 41 գրամ մեթամֆետամինի նմանվող զանգված կար:

Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռվեց քրեական վարույթ, երկուսն էլ ձերբակալվեցին:

Դատարանի որոշմամբ՝ փետրվարի 1-ին խուզարկություն կատարվեց «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենան վարած 31-ամյա տղամարդու բնակարանում:

Հայտնաբերվեց մեթամֆետամինի նմանվող զանգվածով մեկ փաթեթ՝ 2 կիլոգրամ 29 գրամ քաշով: Իսկ նրա վարած մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվեց նույնանման զանգվածով երկու փաթեթ՝ընդհանուր մոտ 415 գրամ քաշով:

31-ամյա տղամարդիկ կալանավորվել են: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

## ԹՄՐԱՄԻՋՈՑ

Հունվարի 31-ի գիշերը՝ ժամը 01:15-ին, ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ գողացել են Ոստան գյուղի Շիրազի փողոցի տներից մեկի մոտ կայանված իր «Կիա» մակնիշի մեքենան: Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողները պարզել են, որ Ուրցաձոր գյուղի բնակչի մեքենան գողացել են՝ օգտվելով շարժիչը գործարկված եւ դռները բաց լինելու հանգամանքից: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մեքենան գողացել է Դիմիտրով գյուղի բնակիչ 34-ամյա երիտասարդը: Նա հայտնաբերվել եւ գողացված մեքենայով հանդերձ տեղափոխվել է բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող զանգվածով կաթուցիչ, ներարկիչներ եւ ծալովի դանակ:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

## ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողները հունվարի 22-ին ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Վերին Արտաշատ գյուղի բնակիչ 41-ամյա մի տղամարդ Այգեպատ գյուղում վարձակալած տանը զբաղվում է ապօրինի ձեռնարկատիրությամբ՝ շշալցնում եւ վաճառում է կեղծ խմիչք:

Նույն օրը ոստիկաններն այցելեցին Այգեպատ: Ընդունելով, որ ոստիկանների տեղեկությունը ճիշտ է, 41-ամյա տղամարդը պատրաստակամություն հայտնեց ներկայացնել կեղծ խմիչքն ու կեղծ դրոշմանիշները:

Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ, եւ նույն օրն էլ կատարվեց զննություն: Հայտնաբերվեցին տարբեր տեսակների 227 շիշ օղի, տակառներով կեղծ գինի, 22 շիշ կեղծ կոնյակ, 3782 կեղծ դրոշմանիշ, 5400 դատարկ շիշ եւ խցաններ:

Նույն օրը նման մի ապօրինի ձեռնարկատիրություն էլ բացահայտեցին Վաղարշապատի համայնքային ոստիկանները: Ըստ օպերատիվ տեղեկության՝Գրիբոյեդով գյուղի բնակիչ 67-ամյա տղամարդը, կեղծ խմիչքից բացի, վաճառում էր նաեւ առանց «ՔյուԱռ»-ի ծխախոտ:

Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ, եւ հունվարի 22-ին էլ կատարվեց զննություն: Հայտնաբերվեց առանց «ՔյուԱռ»-ի 770 տուփ ծխախոտ եւ 129 շիշ տարբեր տեսակների կեղծ օղի ու կոնյակ:

Նման մի օպերատիվ տեղեկություն էլ Վաղարշապատի համայնքային ոստիկանները ստացան հունվարի 26-ին: Ըստ տվյալի՝ Էջմիածնի Տիգրան Մեծի փողոցի բնակիչ 39-ամյա տղամարդն էր զբաղվում ապօրինի ձեռնարկատիրությամբ՝ պատրաստում եւ իրացնում էր կեղծ խմիչք:

Նույն օրը ոստիկաններն այցելեցին տղամարդուն: Նա ընդունեց, որ նկուղում ունի կեղծ խմիչքներ, որոնք պատրաստ է ներկայացնել:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ հայտնաբերվել են 22 շիշ կեղծ օղի եւ մեծ քանակի դատարկ շշեր:

Երեք դեպքով էլ նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ԶԵՆՔ–ԶԻՆԱՄԹԵՐՔ

Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչության ծառայողները փետրվարի 2-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Արմաշ գյուղի 50-ամյա բնակիչը ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 50-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել է ապօրինի պահվող երկփողանի ողորկափող հրացան: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին: ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է քրեական պատասխանատվությունից խուսափելու համար կամավոր հանձնել ապօրինի պահվող զենք-զինամթերքը:

## ՅՈՒՐԱՑՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը պաշտոնեական դիրքն օգտագործելով, խմբի կազմում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրն ու պատկանելությունը թաքցնելու եղանակով օրինականացրել է այն: Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ վերջինս, 2013թ. ապրիլին տեղեկանալով, որ համապատասխան ընկերությունը համայնքում բջջային կապի կայան տեղադրելու համար ցանկանում է վարձակալության նպատակով հողամաս ձեռք բերել, նպատակադրվել է նախապես որոշված անշարժ գույքը օրենքի խախտմամբ հանել համայնքի հաշվեկշռից եւ գրանցել եղբոր անվամբ՝ այդ կերպ կազմակերպելով այն փաստացի իրենը դարձնելու գործընթացը:

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով պաշտոնատար անձը կազմակերպել եւ անցկացրել է հողամասի աճուրդ-վաճառք եւ, խախտելով օրենքով սահմանված կարգով աճուրդի իրականացման կարգը, աճուրդին մասնակից է դարձրել նաեւ եղբորն ու հողամասը վաճառել նրան: Դրանից հետո համայնքի ղեկավարի եղբոր եւ հիշյալ ընկերության միջեւ կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր: Արդյունքում՝ վարձավճարի գին կազմող 5.924.000 ՀՀ դրամը փոխանցվել է համայնքի ղեկավարի եւ նրա եղբոր բանկային հաշիվներին, սակայն նշված գումարն ամբողջությամբ տնօրինվել է համայնքի ղեկավարի կողմից: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար Դպրաբակ համայնքի նախկին ղեկավարին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (համապատասխանում է 2021 թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին):

Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերը նշված անշարժ գույքն արգելադրվել է, իսկ պետությանը պատճառված շուրջ 6 միլիոն դրամի վնասը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ փետրվարի 2-ից 3-ը գրանցվել է 13 ավտովթար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԴ

### ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Վերջին տարիներին Դիլիջան քաղաքում եւ նույնանուն համայնքում զբոսաշրջությունը զարգացել է, գործարկվել են բազմաթիվ հյուրանոցներ, հյուրատներ, սննդի օբյեկտներ: Դիլիջանում պետական, սուբվենցիոն ծրագրերով կառուցապատումներ են արվում, ենթակառուցվածքները բարելավվում են: Սակայն կան տարիներով չլուծված հիմնահարցեր, որոնք անհարիր են տուրիստական Դիլիջանին: Դիլիջան համայնքում սպանդանոց չկա, քաղաքի, համայնքի հյուրանոցներում, հյուրատներում, մոթելներում, ռեստորաններում, սրճարաններում մատուցվող ճաշատեսակների միսը ոչ սպանդանոցային ծագում ունի, այսինքն՝ չի ապահովվում քաղաքի բնակիչների եւ հյուրերի առողջ, անվտանգ սնունդը: Հիմնահարց է Դիլիջանում խմելու ջրի հաճախակի անջատումը, երբ վթարների, նորոգման կամ այլ պատճառներով քաղաքին խմելու ջրի մատակարարումը ժամերով անջատվում է:

Դիլիջանի կենտրոնական փողոցները բարեկարգվել են, սակայն ոչ կենտրոնական փողոցները ոչ այդքան լավ վիճակում են: Դիլիջանի բնակիչները լրագրողիս բողոքել են, որ Հակոբջանյան փողոցի հենապատի շատ հատվածներ քանդված են, սակայն համայնքապետարանը չի նորոգում այն: Դիլիջանցիներին մտահոգում է նաեւ այն, որ տարիներ շարունակ վթարների հետեւանքով կամ այլ պատճառներով ոստիկանության Դիլիջանի բաժնի պահպանվող հատուկ տարածք տեղափոխված ավտոմեքենաները կայանում են հենց փողոցում՝ ոստիկանության շենքի առաջ, Դիլիջանի համայնքապետարանի շենքի կողքին: Վթարներից ջարդված ավտոմեքենաների տեսքը հարիր չէ տուրիստական Դիլիջանի կենտրոնին, բացի այդ, այդտեղ կայանած ավտոմեքենաները խանգարում են բեռնված կենտրոնում ավտոմեքենաների ազատ երթեւեկին: Տուրիստական Դիլիջանին հարիր չեն Դիլիջան քաղաքը մայրաքաղաք Երեւանին կապող հին, բարոյապես եւ մաշված «Գազել» մակնիշի միկրոավտոբուսները: Դիլիջան քաղաքը ավտոկայարան չունի, ավտոկայարանի շենքում ներկայումս «Սքայ» սուպերմարկետն է: Ամռան տապին, ձմռան ցրտին, անձրեւներ ու ձյուն տեղալու ժամանակ ուղեւորները պատսպարվելու տեղ չունեն: Մայրաքաղաք մեկնողներին տոմսեր վաճառվում են ավտոկայարանի կողքի շենքի փոքրիկ պատուհանից:

### ՄԻՋՆԱԿԱՐԳ ՉԴԱՐՁԱՎ

Երբ կառուցվում էր Կիրանց գյուղի դպրոցի նոր շենքը, հայտարարվել էր, որ այն կստանա միջնակարգի կարգավիճակ եւ Կիրանցի բարձր դասարանցիները ստիպված չեն լինի հաճախել Ներքին Ծաղկավանի եւ Սարիգյուղի միջնակարգ դպրոցներ: 2024թ. սեպտեմբերի 1-ին Կիրանցի դպրոցի նոր շենքը գործարկվեց, սակայն միջնակարգի կարգավիճակ չտրվեց: Հունվարի 29-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ կատարել, թե երբ Կիրանցի դպրոցին կտրվի միջնակարգի կարգավիճակ: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Կիրանցի հիմնական դպրոցը միջնակարգի կարգավիճակ ստանալու հարցի մասով առաջարկում ենք դիմել լիազոր մարմնին»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ՓԱՇԻՆՅԱՆ-ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՎԵՆՍԻ ԱՅՑԻՆ

**Երեկ՝ փետրվարի 4-ին, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն Աբու Դաբիում՝ Արաբական Միացյալ Էմիրություններում, հանդիպում է ունեցել Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի հետ:**

Ըստ պաշտոնական տեղեկության՝ նրանք գոհունակություն են հայտնել երկկողմ առեւտրի մեկնարկի եւ Ադրբեջանից Հայաստան նավթամթերքի շարունակական արտահանման, ինչպես նաեւ երրորդ երկրներից հացահատիկի եւ այլ ապրանքների տարանցման իրականացման կապակցությամբ՝ Ադրբեջանի տարածքով դեպի Հայաստան:

Կողմերը համաձայնել են շարունակել ուսումնասիրել երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Նրանք նաեւ ողջունել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների փոխադարձ այցելությունները եւ համաձայնել վստահության ամրապնդման միջոցառումների ընդլայնման անհրաժեշտության հարցում:

Վարչապետ Փաշինյանը եւ նախագահ Ալիեւը քննարկել են TRIPP-ի եւ այլ ենթակառուցվածքների նախագծերի իրականացումը:

Հետաքրքիր հանգամանքներից մեկն այն է, որ երկկողմ հանդիպումը տեղի ունեցավ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Հայաստան եւ Ադրբեջան կատարվելիք այցից առաջ:

Ստացվում է, որ Փաշինյան-Ալիեւ հանդիպումը ենթադրում էր համաձայնեցում որոշ հարցերի շուրջ, որոնք պետք է քննարկեն ԱՄՆ փոխնախագահի հետ: Այսինքն՝ հանդիպման նպատակն էր խոսել ու քննարկել այն, ինչ պետք է ներկայացվի Վենսին:

Հիշեցնենք, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Truth Social-ի իր էջում գրառում էր արել, որ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը այս տարվա փետրվարին պատրաստվում է այցելել Հայաստան եւ Ադրբեջան:

Հիշեցնենք, որ 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում Դոնալդ Թրամփի հետ եռակողմ հանդիպման ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդները ստորագրել են համատեղ հռչակագիր՝ Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության պահպանման ու տրանսպորտային հաղորդակցության ստեղծման վերաբերյալ: Հաղորդակցությունների բացման այդ նախագիծն ստացել է «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» անվանումը:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԱՎԱՐՏԵԼ ԵՆ

Իրանի զինված ուժերի պարեկային եւ հետախուզական անօդաչու թռչող սարքը հաջողությամբ ավարտել է իր առաքելությունը միջազգային ջրերում՝ ԱՄՆ-ի կողմից նման ԱԹՍ խոցելու մասին լուրերի ֆոնին: Այս մասին տեղեկանում է Mehr լրատվական գործակալությունից:

Նշվում է, որ տվյալ հետախուզական ԱԹՍ-ների առաքելությունն է մշտադիտարկել Իսլամական Հանրապետության մերձակա շրջաններում բոլոր ռազմական տեղաշարժերը: Ըստ Fars News գործակալության՝ անօդաչուն տվյալները ստանում եւ դրանք փոխանցում է իրական ժամանակի ռեժիմով:

Իր հերթին, տեղեկացված աղբյուրը, մեկնաբանելով տեղեկություններն այն մասին, որ ԱՄՆ կործանիչը թիրախավորել է «Աբրահամ Լինքոլն» ավիակրին մոտեցող ԱԹՍ-ն, Tasnim գործակալությանը հայտնել է, որ դա եղել է «Շահեդ-129» անօդաչու:

««Շահեդ-129» անօդաչու թռչող սարքը միջազգային ջրերում իրականացնում էր հետախուզության, մոնիթորինգի եւ պատկերագրման իր առօրյա եւ օրինական առաքելությունը: Սա համարվում է ստանդարտ եւ օրինական ընթացակարգ», - հայտնել է աղբյուրը: Նա հավելել է, որ ԱԹՍ-ն հաջողությամբ փոխանցել է իր հավաքած տվյալները հրամանատարական կենտրոնին, որից հետո ԱԹՍ-ի հետ կապը կորել է:

Չնայած իրանական կողմը հաղորդում է, որ խոցվել է «Շահեդ-129» ԱԹՍ, ավելի վաղ ԱՄՆ զինվորականները հայտնել էին, որ պաշտպանության նպատակով F-35 կործանիչի կողմից խոցվել է «Շահեդ-139» ԱԹՍ, որն «անհայտ մտադրությամբ» շարժվում էր դեպի «Աբրահամ Լինքոլն» ավիակիրը:

### ՀԱՅԱՍՏԱՆ–ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը հանդիպել է պաշտոնական այցով Երեւանում գտնվող Հնդկաստանի Հանրապետության պաշտպանության ուժերի շտաբի պետ, գեներալ Անիլ Չաուհանի գլխավորած պատվիրակությանը: Այս մասին նշված է Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

Հաղորդվում է, որ զրուցակիցները քննարկել են երկկողմ օրակարգի հարցերի լայն շրջանակ՝ բարձր գնահատելով Հայաստան-Հնդկաստան դինամիկ զարգացող հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալը ներկայացրել է Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները եւ Հարավային Կովկասում անվտանգության ապահովմանն ու խաղաղության հետագա ինստիտուցիոնալացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության ջանքերը:

Նշվում է, որ հանդիպման ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել տարածաշրջանային եւ միջազգային անվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

### ԻՍՐԱՅԵԼԸ ԱՐԳԵԼԵԼ Է

Իսրայելական բանակը փետրվարի 3-ին չեղյալ է հայտարարել Գազայի հատվածից Ռաֆահի սահմանային անցակետով 40 պաղեստինցի հիվանդների եւ վիրավորների երրորդ խմբի մեկնումը Եգիպտոս: Այս մասին հայտնում է Al Jazeera-ն:

Գազայում Պաղեստինյան Կարմիր մահիկի խոսնակ Ռաիդ ան-Նամսը հայտարարել է, որ իրենք «պաշտոնապես տեղեկացվել են անցակետով հիվանդների եւ վիրավորների ուղեւորության կազմակերպման չեղարկման մասին, չնայած բուժանձնակազմը սկսել էր նախապատրաստությունը տեղափոխման համար»:

Նա պարզաբանել է, որ որոշումն անակնկալ էր եւ խաթարել է Գազայի հատվածից արտասահման բուժման մեկնել պատրաստվող տասնյակ հիվանդների ճանապարհորդության ծրագրերը:

Իսրայելի կողմից որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ իսրայելական բանակը հայտարարել է, որ պահեստազորի սպա է ծանր վիրավորվել Գազայի հատվածի հյուսիսում տեղի ունեցած հարձակման ժամանակ, եւ որ պատասխանը կոշտ է լինելու:

Տեղեկություններ են ստացվել, որ փետրվարի 4-ի լուսաբացից ի վեր Գազայի հատվածում Իսրայելի թիրախում են հայտնվել քաղաքացիական տներ եւ տեղահանվածների վրաններ: Հրետանային եւ օդային հարվածներն ուղղվել են աթ-Թուֆֆահ, աշ-Շուջայիյա եւ ազ-Զեյթուն թաղամասերին:

Գազայի բժշկական աղբյուրները հայտնել են, որ վաղ առավոտյան Գազա քաղաքի եւ Խան Յունիսի վրա Իսրայելի կողմից իրականացված օդային եւ հրետանային հարվածների հետեւանքով զոհվել է 18 պաղեստինցի, այդ թվում՝ երեխաներ:

Փետրվարի 2-ին Եգիպտոսի եւ Գազայի հատվածի միջեւ գտնվող Ռաֆահի սահմանային անցակետը սկսել էր գործել սահմանափակ հիմունքներով եւ Իսրայելի խիստ հսկողության ներքո:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 2-ից 3-ն ընկած ժամանակահատվածում բացահայտվել է 118 հանցագործություն, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

## ԼՈՒՐԵՐ

### ՁՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Ճապոնիայում առնվազն 35 մարդ է զոհվել երկրի հյուսիսում եւ Ճապոնական ծովի ափին ձյան սաստիկ տեղումների հետեւանքով: Այս մասին հաղորդել է TBS հեռուստաալիքը՝ վկայակոչելով տեղական իշխանություններին:

Զոհվածների թվում են տանիքները ձյունից մաքրելիս ընկածները, տարեց մարդիկ, որոնք մահացել են գերլարվածությունից՝ ճանապարհներն ու բակերը մաքրելիս: Նիիգատայի պրեֆեկտուրայում՝ Ճապոնական ծովի ափին, տեղացի բնակիչներից մեկը մնացել է ձյան ծանրությունից փլուզված սեփական տան փլվածքի տակ:

TBS-ի տվյալներով՝ բազմաթիվ շրջաններում իշխանությունները չեն հասցնում մաքրել ճանապարհները, որտեղ ավտոմոբիլային մեծ խցանումներ են առաջացել: Մի շարք շրջաններում արդեն երեք օր անընդմեջ փակ են տարրական եւ միջնակարգ դպրոցները:

Ճապոնիայի գլխավոր Հոնսյու կղզու հյուսիսում գտնվող Աոմորիի պրեֆեկտուրայում ճանապարհները ձյունից մաքրելու համար ուղարկվել են բանակային ստորաբաժանումներ

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

«Ժողովուրդ» թերթի խմբագրության ՍՊԸ-Ի 2025թ. տարեկան հաշվետվությունը

ԵԿԱՄՈՒՏ

Այդ թվում՝

Թերթեր՝ 4.971.040 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասուն մեկ հազար քառասուն) դրամ:

Գովազդ՝ 74.318.928 (յոթանասունչորս միլիոն երեք հարյուր տասնութ հազար ինը հարյուր քսանութ) դրամ:

ԾԱԽՍԵՐ

Այդ թվում՝

Տպագրական ծախս՝ 6.052.000 (վեց միլիոն հիսուներկու հազար) դրամ:

Աշխատավարձ՝ 56.297.164 (հիսունվեց միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար հարյուր վաթսունչորս) դրամ:

Այլ ծախսեր՝8.292.766 (ութ միլիոն երկու հարյուր իննսուն երկու հազար յոթ հարյուր վաթսունվեց) դրամ:

ՀԱՐԿԵՐ

Եկամտահարկ՝ 10.743.234 (տասը միլիոն յոթ հարյուր քառասուն երեք հազար երկու հարյուր երեսունչորս) դրամ:

Շրջ. հարկ՝4.055.161 (չորս միլիոն հիսուն հինգ հազար հարյուր վաթսուն մեկ) դրամ:

Սոց. վճար՝ 2.434.743 (երկու միլիոն չորս հարյուր երեսուն չորս հազար յոթ հարյուր քառասուներեք) դրամ:

Դրոշմանիշ՝ 788.500 (յոթ հարյուր ութսուն ութ հազար հինգ հարյուր) դրամ:

Ապահովագր. 54.000 (հիսուն չորս հազար) դրամ:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Աննա Համլետի Միքայելյանի «Սեւանի պետական քոլեջ»-ի կողմից 03.03.2003 թվականին տրված AK N 021302 դիպլոմը: Համարել անվավեր:

## ԻԴՐԱՄ

# ՎՃԱՐՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

**Վերջին օրերին մամուլում տեղ են գտել հրապարակումներ՝ «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հեռահաղորդակցության ոլորտի օպերատորներ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի, «Յուքոմ» ՓԲԸ-ի եւ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ծառայությունների դիմաց հավաքագրումները դադարեցնելու մասին: Լինելով հաճախորդամետ, թափանցիկ եւ արժանահավատ տեղեկատվությունը կարեւորող ընկերություն՝ Իդրամը անհրաժեշտ է համարում որոշակի պարզաբանումներ ներկայացնել:**

Հեռահաղորդակցության օպերատորների կողմից շահարկվում է վճարահաշվարկային ընկերությունների, մասնավորապես Իդրամի կողմից իրենցից գանձվող «բարձր միջնորդավճարը»:

Նախ նշենք, որ միջնորդավճարը վճարվում է հեռահաղորդակցության օպերատորի կողմից Իդրամին, դրա չափը վերաբերում է երկու առեւտրային ընկերություններին, առեւտրային գաղտնիք է եւ դրա վերաբերյալ հրապարակային քննարկումները դուրս են բիզնես գործելաոճի տրամաբանությունից: Քանի որ դրանք, այնուամենայնիվ, շահարկվում են, նշենք, որ Իդրամը օպերատորների ծառայությունների դիմաց դրամական միջոցների հավաքագրման համար միջնորդավճար չի գանձում իր հաճախորդներից, իսկ օպերատորներից ստացվող միջնորդավճարները վերջին տարիներին շարունակաբար նվազեցվել են՝ ի շահ օպերատորների, ինչին Իդրամն ընդառաջ է գնացել՝ ելնելով փոխշահավետության եւ իր հաճախորդների հարմարավետության ապահովման սկզբունքից, սակայն օպերատորների այս վերջին պահանջը՝ ուղղված Իդրամին վճարվող միջնորդավճարների կտրուկ նվազեցմանը, կհանգեցնի ինքնարժեքից ցածր միջնորդավճարով ծառայությունների մատուցման: Կարեւոր է փաստել, որ նշված միջնորդավճարները գանձվում են Իդրամի մի շարք գործառնական ծախսեր ծածկելու համար, այն է՝ էլեկտրոնային փողի թողարկում, գործարքների տեխնիկական եւ ծրագրային սպասարկում, տեղեկատվական անվտանգություն, տերմինալների սպասարկում, կանխիկ գումարի հավաքագրում եւ փոխանցում, շարունակական ներդրումներ թվային եւ ֆիզիկական ենթակառուցվածքների պահպանման եւ զարգացման ուղղությամբ՝ ապահովելով անխափան վճարումների իրականացումը: Բացի այդ օրական կտրվածքով մեր քաղաքացիների կողմից կատարվում են բավականին մեծ թվով սխալ վճարումներ: Այս գումարները քաղաքացիներին վերադարձնելու ուղղությամբ Իդրամը նույնպես բավականին մեծ ռեսուրս է ներդնում՝ տեխնիկական եւ մարդկային՝ սպասարկելով յուրաքանչյուր զանգը եւ գործարքը: Վերոնշյալ բոլոր ծախսերը որոշակի ինքնարժեք են ձեւավորում, որի պայմաններում օպերատորների կողմից առաջարկվող նոր՝ էականորեն ցածր միջնորդավճարները Իդրամի համար ուղղակի տնտեսապես անընդունելի էին: Հենց այդ հիմքով էլ Իդրամը մերժել է նվազեցնել միջնորդավճարները՝ օպերատորների անտրամաբանական պահանջը՝ միեւնույն ժամանակ առաջարկելով փոխշահավետ համաձայնության գալ՝ բանակցությունների միջոցով, սակայն օպերատորների կողմից նշված առաջարկները մերժվել են:

Ցանկանում ենք մեր հանրության ուշադրությունը հրավիրել մեկ այլ ուշագրավ հանգամանքի վրա. օպերատորները, տարօրինակ զուգադիպությամբ, Իդրամին նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներկայացրել են միջնորդավճարները նվազեցնելու պահանջ, ընդ որում կրկին տարօրինակ զուգադիպությամբ պահանջելով ֆիքսել միեւնույն միջնորդավճարը: Իդրամի կողմից մերժում ստանալուց հետո, տարբեր ժամանակահատվածներում Իդրամը օպերատորներից ստացել է գրեթե նույն ամսաթվով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում: Ընդ որում օպերատորներից երկուսը՝«Յուքոմ» ՓԲԸ-ն եւ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, ծանուցումը ներկայացրել են պայմանագրի էական պայմանների կոպիտ խախտմամբ՝իրենց կողմից ծառայություններն անջատելուց 5-6 օր առաջ: Այս գործելակերպը նման է հակամրցակցային համաձայնության, ուստի Իդրամը դիմել է Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով՝ստանալու նշված քայլերի իրավաչափության գնահատականը:

Հատուկ անդրադառնալով օպերատորների կողմից շահարկվող հայտարարություններին այն մասին, որ Իդրամն է մերժել փոխշահավետ համագործակցության առաջարկը, նշենք, որ դա օբյեկտիվ իրականության հետ որեւէ աղերս չունի, ավելին՝ հանդիսանում է հասարակությանը մոլորեցնելու դրսեւորում, ուստի Իդրամն իրեն իրավունք է վերապահում դատական կարգով վիճարկել այդ շահարկումները եւ պահանջել դրանց հերքումը: Օպերատորները իրենց կողմից առաջարկվող եւ Իդրամի համար տնտեսապես ոչ ձեռնտու միջնորդավճարների վերանայման ուղղությամբ հետքայլի հնարավորություն ընդհանրապես չեն դիտարկում եւ անկախ իրենց հայտարարություններից բաց չեն որեւէ փոխզիջման:

Այնուամենայնիվ, Իդրամն իրապես բաց է օպերատորների հետ բանակցությունների համար, եւ ելնելով հաճախորդի լավագույն փորձն ապահովելու սկզբունքից՝ պատրաստ է վերսկսել համագործակցությունը օպերատորների հետ՝ փոխշահավետ պայմաններով:

***ԻԴՐԱՄԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ***

## ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՔՐՈՒՅՑԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Չինաստանի նախագահ Սի Ծինփինը տեսակապով զրույց են անցկացրել: Քննարկումների սկզբում Պուտինը շեշտել է, որ ռուս-չինական համապարփակ գործընկերությունը եւ ռազմավարական փոխգործակցությունը օրինակելի բնույթ են կրում: Զրույցի բաց հատվածի տեսանյութը տարածել է Կրեմլի մամուլի ծառայությունը:

Ըստ ՌԴ նախագահի՝Մոսկվայում եւ Պեկինում նախկինում տեղի ունեցած շփումների ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ գործակցության հետագա խորացման հիմնական ուղղությունները: Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ ապրանքաշրջանառությունն արդեն երրորդ տարին է՝ գերազանցում է 200 միլիարդ դոլարը: Պուտինը շեշտել է, որ Ռուսաստանը Չինաստան էներգառեսուրսների մատակարարման առումով առաջատարն է:

Սի Ծինփինն իր հերթին շեշտել է, որ չին-ռուսական հարաբերությունները զարգացման նոր փուլ են մտնում, առեւտրային համագործակցությունը դինամիկ եւ կայուն կերպով զարգանում է, արագ տեմպերով զարգանում է նաեւ նոր ոլորտներում գործակցությունը:

Իր հերթին, ինչպես տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը, ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտնել է, որ գլխավորը տեսակապով տեղի ունեցած զրույցի փակ հատվածն է: Քննարկման օրակարգում միջազգային հարցերն են եւ երկկողմ հարաբերությունները:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

«ՍՏԵՓԱՆ ԳԻՇՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՎԱՎԵՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

**2023 թվականից սկսած՝ «Ինքնություն» հիմնադրամը մեկնարկել է Հայաստանի բազմադարյա վանքերի, եկեղեցիների ու մշակութային կոթողների վավերագրումը:**

Հիմնադրամի գաղափարի շուրջ համախմբված երիտասարդները հաղթահարում են դժվարանցանելի ճանապարհներ, լեռներ ու անտառներ՝ պատմական հուշարձանները վավերագրելու նպատակով:

Արդեն իսկ իրականացված նկարահանումների արդյունքում վավերագրվել են Առաքելոց վանքը, Ենոքավանի մատուռը, Սամսոնի կամուրջը, Կայան բերդը, Շատիվանքը, Ջորաց տաճարը եւ մշակութային մեծ արժեք ունեցող այլ կոթողներ:

«Ինքնություն» հիմնադրամը «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի ամենամյա դրամաշնորհային ծրագրի հաղթողներից է: Հիմնադրամի աջակցությամբ ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ՝ նկարահանումները եւ մոնտաժային աշխատանքներն իրականացնելու համար:

««Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը կարեւորում է հայկական մշակույթի պահպանումը, զարգացումն ու տարածումը: Ունենք հարուստ մշակույթ՝ նյութական եւ ոչ նյութական արժեքներով, որը հայ ժողովրդին առանձնացնում է այլ ազգերից: Այս նախաձեռնության շնորհիվ եւս հետագայում մեր սերունդները հնարավորություն կունենան փաստերով ապացուցելու, թե ինչ մշակութային արժեքներ ունի հայ ժողովուրդը»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

«Մեր նպատակը մշակույթի մասին վավերագրական ֆիլմեր ստեղծելն ու տարածելն է: Այս պահին կենտրոնացած ենք մշակութային, նյութական արժեքների վրա: Ընտրում ենք 3 չափանիշով. մեծ արժեք ունեցող, քիչ հայտնի եւ դժվար հասանելի վանքեր, ամրոցներ, բերդեր, կամուրջներ: Մինչեւ «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությունը, դրամահավաքի արդյունքում ապահովել էինք որոշակի սարքավորումներ, որոնցով նկարահանումներ էինք իրականացնում: Բայց արդեն մի փուլ է գալիս, որ ցանկանում ես նկարահանումների որակը բարձրացնել ու արդեն լրացուցիչ սարքավորումների կարիք ես զգում: «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությունը շատ տեղին էր. մենք ձեռք բերեցինք ամենավերջին սերնդի դրոններից, որով լրիվ այլ որակի կադրեր ենք կարողանում ստանալ: Ինչպես նաեւ ձեռք բերեցինք մոնտաժային համակարգիչ, որի միջոցով իրականացնում ենք նյութերի մոնտաժային աշխատանքները»,- նշել է «Ինքնություն» հիմնադրամի հիմնադիր տնօրեն Գագիկ Հարությունյանը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է Ակբա բանկի, ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ, Կրեդիտ Ագրիկոլ Ազգային Ֆեդերացիայի եւ Ստեփան Գիշյանի ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերն ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

ԱՇԽԱՐՀ

## «ԳՐԵՄՄԻ» Է ՍՏԱՑԵԼ

Հայ-ամերիկացի պրոդյուսեր Սեւ Օհանյանի «Մեղավորներ» ֆիլմը Լոս Անջելեսում կայացած 68-րդ ամենամյա «Գրեմմի» մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է երկու «Գրեմմի» մրցանակի՝ «Լավագույն երաժշտություն» եւ «Լավագույն կոմպիլյացիա» անվանակարգերում:

Կոմպոզիտոր Լյուդվիգ Գյորանսոնը ստացել է «Գրեմմի»՝ «Լավագույն երաժշտություն» անվանակարգերում՝ իր օրիգինալ երաժշտության համար, իսկ «Մեղավորները» նաեւ արժանացել է «Լավագույն կոմպիլյացիա» անվանակարգերին՝ որպես տեսողական մեդիայի լավագույն երաժշտություն՝ ֆիլմում ներկայացված երգերի ամբողջական հավաքածուի համար:

Ֆիլմը նաեւ արժանացել է երեք անվանակարգի՝ «Լավագույն երգ տեսողական մեդիայի համար» անվանակարգերում՝ «Ես քեզ ստեցի», «Գունատ, գունատ լուսին» եւ «Մեղավորներ» երգերի համար, սակայն չի հաղթել այն անվանակարգում, որտեղ արժանացել է «KPop Demon Hunters»-ի «Ոսկե» մրցանակին:

Հիշեցնենք՝ այս տարվա սկզբին ֆիլմը մասնակցեց 2026 թվականի «Օսկար» մրցանակաբաշխությանը՝ որպես «Օսկար» մրցանակաբաշխության պատմության մեջ ամենաշատ առաջադրված ֆիլմ՝ 16 անվանակարգով, մինչդեռ Օհանյանը պատմություն կերտեց՝ որպես ֆիլմի պրոդյուսեր՝ որպես առաջին հայ ամերիկացի, որը առաջադրվել է «Լավագույն ֆիլմ» անվանակարգում, ինչը որոշիչ պահ էր համաշխարհային կինոյում հայկական ներկայացվածության համար՝ 2026 թվականի մարտի 15-ին Լոս Անջելեսի «Դոլբի» թատրոնում կայանալիք «Օսկար» մրցանակաբաշխությունից առաջ:

## ՊԵԼՑԸ ԽԱԽՏԵՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլա Պելցի հայրը՝ միլիարդատեր Նելսոն Պելցը, վերջապես խախտել է լռությունը իր դստեր, փեսայի եւ Բեքհեմների ընտանիքի միջեւ բարձր մակարդակի ընտանեկան կոնֆլիկտի ֆոնին: Բրուքլին Բեքհեմի հնչեղ հայտարարությունը նոր քննարկման առիթ է դարձել: Անցյալ ամսվա վերջին Վիկտորիայի եւ Դեյվիդի 26-ամյա որդին հրապարակավ հայտարարել է Instagram-ում, որ չի ուզում հաշտվել իր ծնողների հետ: Ավելին, նա մեղադրել է նրանց 30-ամյա Նիկոլայի հետ իր ամուսնությունը դիտավորյալ քանդելու փորձի մեջ:

83-ամյա բիզնես մագնատը մեկնաբանել է իրավիճակը Ֆլորիդայում WSJD Invest Live ներդրումային համաժողովում հարց ու պատասխանի ժամանակ: «Իմ դուստրը եւ Բեքհեմները բոլորովին այլ պատմություն են, եւ նա այսօր այստեղ տեղ չունի»,- դիվանագիտորեն նշել է Պելցը,- «բայց կարող եմ ասել մեկ բան. իմ դուստրը հրաշալի է, իմ փեսան՝ Բրուքլինը, հրաշալի է, եւ ես անկեղծորեն մաղթում եմ նրանց երկար եւ երջանիկ ամուսնություն»: Երբ Պելցին հարցրել են, թե արդյոք նա զույգին խորհուրդներ է տալիս դժվարին իրավիճակը հաղթահարելու վերաբերյալ, նա ժպիտով պատասխանել է. «Այո՛, տալիս եմ: Բայց երբեմն նրանք են ինձ խորհուրդներ տալիս»: Նելսոն Պելցի կարողությունը գնահատվում է մոտ 1.6 միլիարդ դոլար՝ կրկնակի ավելի, քան Վիկտորիա եւ Դեյվիդ Բեքհեմների համատեղ կարողությունը, որը գնահատվում է 680 միլիոն դոլար:

Նախկինում լրագրող Մարինա Հայդը The Rest Is Entertainment փոդքաստում նշել էր, որ երկու ընտանիքների մոտեցումները փողի նկատմամբ մեծապես տարբերվում են: Նրա խոսքով՝ Բեքհեմները ֆինանսապես աջակցում են Բրուքլինին, բայց ցանկանում են, որ նա անկախանա: Միեւնույն ժամանակ, լուրեր են շրջանառվում, որ Նելսոն Պելցը հայտարարել է, որ իր դստերը ամսական 1 միլիոն դոլար «նպաստ» է վճարում:

Բեքհեմների ընտանիքն ինքը որոշել է լռել Բրուքլինի սկանդալային հայտարարությունից հետո: Մեկնաբանություններ անելու փոխարեն Դեյվիդը, Վիկտորիան եւ նրանց երեխաները՝ Ռոմեոն, Քրուզը եւ Հարփերը, ցույց են տվել իրենց միասնությունը՝ միասին հայտնվելով Փարիզի նորաձեւության շաբաթում:

ՄԱՐՔԱԿԱՆ

## ԱՐԳԵԼԵԼ ԵՆ

Իտալիայի ներքին գործերի նախարարության որոշմամբ՝ երկրի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» երկրպագուներին արգելվել է այցելել թիմի երեք արտագնա հանդիպման: Պատճառը «Կրեմոնեզեի» դարպասապահ Էմիլ Աուդերոյի վրա նետած ճայտրուկի դրվագն է Իտալիայի առաջնության 23-րդ տուրի «Կրեմոնեզե»-«Ինտեր» խաղի (0:2) ժամանակ: Աուդերոն ոտքի եւ ականջի վնասվածք էր ստացել: Արգելքը կգործի մինչեւ մարտի 23-ը եւ չի տարածվի մարտի 8-ին նախատեսված «Միլան»-«Ինտեր» խաղի վրա, հաղորդում է La Gazzetta dello Sport-ը:

«Ինտերի» երկրպագուները չեն կարողանա ներկա լինել «Սասուոլոյի», «Լեչեի» եւ «Ֆիորենտինայի» դեմ հանդիպումներին:

## ՏՐԱՆՍՖԵՐ

Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ն ցանկանում է ձեռք բերել աշխարհի ակումբային չեմպիոն Լոնդոնի «Չելսիի» արգենտինացի կիսապաշտպան Էնցո Ֆերնանդեսին, հաղորդում է Caught Offside-ը:

Անգլիական ակումբը նրա տրանսֆերից ակնկալում է 100 միլիոն եվրո: Փարիզյան ակումբը պատրաստ է վճարել այդ գումարը:

Էնցո Ֆերնանդեսի ծառայություններով հետաքրքրված է նաեւ Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալը», որը առաջարկ կանի «Չելսիին», եթե հեռանա անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը:

Էնցո Ֆերնանդեսը 2023թ. հունվարից է հանդես գալիս «Չելսիում»: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2032թ. հունիս:

Ընթացիկ մրցաշրջանում Էնցո Ֆերնանդեսը «Չելսիի» կազմում մասնակցել է 35 հանդիպման, խփել է 11 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 85 միլիոն եվրո:

## ՆՈՐ ՔԱՇԱՅԻՆ ԿԱՐԳ

Փետրվարի 8-14-ը Երեւանի «Դինամո» մարզադահլիճում տեղի կունենան բռնցքամարտի Հայաստանի մեծահասակների եւ երիտասարդների առաջնությունները: Այս մասին հայտնում է Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիան: Փետրվարի 8-ին՝ ժամը 13:00-15:00-ն, «Դինամո» մարզահամալիրում տեղի կունենա թիմերի պատվիրակությունների ժողովը (մանդատը), ժամը 18:00-ին տեղի կունենա վիճակահանությունը, բռնցքամարտիկների կշռման արարողությունը՝ յուրաքանչյուր օր՝ առավոտյան 8-ից 9-ը, «Դինամո» մարզահամալիրում: Մրցումները կմեկնարկեն փետրվարի 9-ին:

Հայաստանի առաջնությունը կանցկացվի World Boxing-ի նոր քաշային կարգերով:

Տղամարդիկ կմրցեն 50 կգ, 55 կգ, 60 կգ , 65 կգ, 70 կգ, 75 կգ, 80 կգ, 85 կգ, 90 կգ եւ +90 կգ քաշային կարգերում:

Կանանց քաշային կարգերն են՝ 48 կգ, 51 կգ, 54 կգ, 57 կգ, 60 կգ, 65 կգ, 70 կգ, 75 կգ, 80 կգ եւ +80 կգ:

● *Փետրվարի 5-ին՝ ժամը 19:30-ին, «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Տարան-Տարան» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000 - 7000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ով է հաշվարկում գնաճի ցուցանիշը, եւ ինչ կարգով է հաշվարկվում այն:**

*Արտավազդ Գրիգորյան, 43 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ գնաճը սպառողական գների ինդեքսի հավելաճի տեմպն է: Սպառողական գների ինդեքսը ներկայացնում է սպառողական շուկայում գների շարժը: Սպառողական շուկայի համար գների ինդեքս (ՍԳԻ) ԱՎԾ-ն հաշվարկում է ամսական պարբերականությամբ՝ դիտարկելով 470 ապրանքների եւ ծառայությունների գները ՀՀ 10 մարզերում եւ Երեւանում: 470 ապրանքների եւ ծառայությունների ցանկն ընտրվել է հասարակության շրջանում սպառողական ծախսերի վերաբերյալ հարցումների իրականացման արդյունքում:

*ՀՀ կենտրոնական բանկ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում գնաճ տերմինը հիմնականում կիրառվում է, երբ խոսքը սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հավելաճի տեմպի մասին է: Այն թեեւ ամբողջովին չի արտացոլում տնտեսությունը, սակայն առավել ընկալելի է հասարակության համար:

*Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Կենսաթոշակի անցնելու համար քաղաքացին ի՞նչ պետք է անի: Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի:**

*Կարինե Մուրադյան, 69 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կենսաթոշակ նշանակող մարմին: Տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմում,
2) անձը հաստատող փաստաթուղթ,
3) հանրային ծառայությունների համարանիշ,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանք (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում քաղաքացին լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը Ինստագրամից*

Գեղամա լեռը հայտնի է իր բուսական եւ կենդանական աշխարհով: Լեռան տարածքում կարելի է հանդիպել եզակի բույսերի: Օրինակ՝ այստեղ աճում են բարձրահասակ կաղամբներ, սոճիներ, անտառային բույսեր, որոնք կազմում են բնության հետաքրքիր էկոհամակարգը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | -13 - 17<br>- 1 - 5 |
| Կոտայքի լեռներ | -12 -15<br>- 1 - 5 |
| Կոտայքի նախալեռներ | - 4 - 7<br>0 + 2 |
| Գեղարքունիք | - 9 - 14<br>0 - 4 |
| Լոռի | -6 - 11<br>+ 3 + 6 |
| Տավուշ | - 5 - 9<br>+ 4 + 7 |
| Արագածոտնի լեռներ | - 13 - 16<br>- 2 - 5 |
| Արագածոտնի նախալեռներ | - 4 - 8<br>0 + 4 |

| | |
|---|---|
| Արարատ | - 4 - 6<br>+ 2 + 4 |
| Արմավիր | - 4 - 7<br>+ 5 + 7 |
| Վայոց ձորի լեռներ | -8 - 12<br>- 2 - 4 |
| Վայոց ձորի նախալեռներ | - 2 - 5<br>+ 5 + 7 |
| Սյունիքի լեռներ | -9 - 14<br>0 - 3 |
| Սյունիքի նախալեռներ | - 7 - 12<br>+ 1 + 4 |
| Սյունիքի հովիտներ | - 2 - 5<br>+ 8 + 11 |
| Երեւան | - 4 - 6<br>+ 3 + 5 |

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **04.02.2026**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*